ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«05» օգոստոսի 2026թ. ՆՄՈ/498-Ա

ք. Արմավիր

ՍԱՄՍՈՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման N1 հավելվածի 3-րդ, 7-րդ և 9-րդ կետերը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված 3-րդ հավելվածի 20-րդ կետը և նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի 2026 թվականի օգոստոսի 5-ի զեկուցագիրը՝

որոշում եմ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի խորհրդական Սամսոն Սարգսյանին 2026 թվականի օգոստոսի 5-ին գործուղել «Նորապատի միջնակարգ դպրոց», «Նորավանի միջնակարգ դպրոց», «Խանջյանի Արմեն Բենիամինի Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց», «Ալաշկերտի Հ. Քոչարի անվան միջնակարգ դպրոց» և «Մրգաշատի Վ. Ափոյանի անվան N1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություններ՝ աշխատանքային այց կատարելու նպատակով:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Արայիկ Հակոբյանին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գործուղման ծախսերի հաշվարկումը և վճարումը:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը (գլխավոր մասնագետ՝ Ա. Համբարձումյան)՝ աշխատակցի փոխադրումն իրականացնելու համար ապահովել հերթապահ մեքենայի տրամադրումը:
4. Փոխադրումն իրականացնել Nissan Tiida մակնիշի 638LL70 համարանիշի ավտոմեքենայով:
5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի խորհրդական Սամսոն Սարգսյանին՝ գործուղումից վերադառնալուց հետո եռօրյա ժամկետում ներկայացնել հաշվետվություն գործուղման արդյունքների վերաբերյալ:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 20028[illegible] Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ 04447253